Известия АН Армянской ССР, Науки о Земле, 6, 71—72, 1969

ԳԻՏԱԿԱՆ ԽՐՈՆԻԿԱ

Ա. Բ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՔԱՆ ՕՐ ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Գերմանական դեմոկրատական հանրապետության աշխարհագետների հերթական 9-րդ կոնգրեսը տեղի ունեցավ այս տարվա ապրիլի վերջերին Բեռլինի Ալ. Հումբոլտի անվան համալսարանի շենքում։ Ի թիվս Լեհաստանից, Չեխոսլովակիայից, Բուլղարիայից եկած հյուրերի ՍՍՀՄ-ից մասնակցում էի ես։

ԳԴՀ-ի աշխարհագրական ընկերության անդամների թիվը մոտ 3000 է, կոնգրեսին մասնակցում էին 800 պատգամավորներ։ Կոնգրեսի բացման պաշտոնական արարողություններից հետո, աշխարհագրական գիտությանը մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար՝ ընկերության մեդալներ հանձնվեցին պրոֆեսորներ՝ Հ. Ռիխտերին (Դրեզդեն), Հ. Կոհլին (Բեռլին), Տ. Մոսին (Հաալե), Թ. Յակոբին (Դրեզդեն), Հ. Կլիեյին (Իենա) և սովետական աշխարհագետ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ի. Մ. Մայրեզոյզին։ Աշխարհագրական և քարտեզագիտական աշխատությունների բարձրորակ հրատարակությունների համար մեդալ հանձնվեց նաև «Գերման-Տաալ», Գոթա, ժողովրդական հրատարակչական ձեռնարկությանը։

Կոնգրեսի աշխատանքները ընթացան պլենար և սեկցիոն նիստերի, ինչպես նաև բազմաթիվ թեմատիկ էքսկուրսիաների ձևով։ «Աշխարհագրական հետազոտությունների պրոբլեմները ԳԴՀ-ում» զեկուցումով հանդես եկավ ընկերության պրեզիդենտ պրոֆ. Հ. Ռիխտերը։ Զեկուցողը նշեց, որ աշխարհագրական գիտության ներկա վիճակը և ապագա դերը հիմնականում կախված է այն ավանդից, որը անցած 20 տարում այդ գիտությունը ներդրել է և հետագայում կարող է ներդրել ԳԴՀ-ում սոցիալիզմի կառուցման գործում։

Աշխարհագրական գիտությունները, նշեց զեկուցողը, պետք է լուծեն երկու կարևոր խնդիր։ Առաջին խնդիրն է՝ սահմանել այն բնագավառները որոնք ժամանակակից գիտությունների սիստեմում բաժին են ընկնում աշխահագրությանը։ Այդ խնդրի լուծումը պայմանավորված է աշխարհագրական գիտության բազմակողմանի տնտեսական նշանակությամբ։ Երկրորդ խնդիրը բխում է աշխարհագրության կրթական նշանակությունից՝ առանձնապես երիտասարդության կրթության և դաստիարակության գործում, բարձր գիտելիքների տեր սոցիալիստական հասարակությանը նվիրված քաղաքացիներ պատրաստելու նպատակով։ Հեղինակը մանրամասն կանգ առավ տնտեսական և ֆիզիկական աշխարհագրության առարկաների բնորոշման և նրանց մեթոդոլոգիայի արդի խնդիրների վրա։ Զեկուցման մեջ առանձնակի տեղ էր տրված բնական և տերիտորիալ արտադրական կոմպլեքսների ուսումնասիրության հարցերին։

Այս տարի լրանում է գերմանացի մեծագույն բնախույզ-աշխարհագետ Ալեքսանդր Ֆոն Հումբոլտի ծննդյան 200-ամյակը, այդ ականավոր հետազոտողի կյանքի և գործունեությանն էր նվիրված պրոֆ. Հ. Զանկեյի զեկուցումը։ Պրոֆ. Հ. Լեմկեյի զեկուցումը նվիրված էր ԳԴՀ-ի կենտրոնական մասի բնատերիտորիալ բաժանմանը, չորրորդականի լանդշաֆտների զարգացման ուսումնասիրության հիման վրա։

Մարքսիստական մեթոդոլոգիայի սկզբունքներով էին կառուցված պրոֆ. Հ. Ռոզի «տերիտորիալ պլանավորման աշխարհագրական ասպեկտները սոցիալիզմի ժամանակ» և պրոֆ. Հ. Կոհլի «տերիտորիալ կարգավորման աշխարհագրական ասպեկտները մոնոպոլիստական կապիտալիզմի պայմաններում» զեկուցումները։

Բավականին հետաքրքիր և բազմազան էին սեկցիաներում կարդացված զեկուցումները նվիրված տնտեսական և ֆիզիկական աշխարհագրության, գեոմորֆոլոգիայի, լանշաֆտագիտության և քարտեզագրության արդի պրոբլեմներին։

Առանձնապես անհրաժեշտ եմ համարում շեշտել «ԳԴՀ-ի ատլասի նշանակությունը թեմատիկ քարտեզագրության զարգացման գործում» խորագիր կրող սեկցիայի աշխատանքը, որտեղ ԳԴՀ-ի Գիտությունների Ակադեմիայի Աշխարհագրության ինստիտուտի դիրեկտոր, ատլասի գլխավոր խմբագիր՝ պրոֆ. Է. Լեմանը հետաքրքրական զեկուցում կարդաց հանրապետության ազգային ատլասի բովանդակության մասին և արդեն լույս տեսած ազգային ատլասների վերլուծության հիման վրա ցույց տվեց թե, որքան արժեքավոր տեղեկություններ են ամփոփվում այդ ատլաս-

ներում և որքան մեծ դեր կարող են խաղալ դրանք ժողովրդատնտեսական տարբեր բնագավառների պահանջները բնական և սոցիալ-տնտեսական ինֆորմացիայով ապահովելու գործում։

Կոնգրեսի երկրորդ պլենար նիստը նվիրված էր ընկերության ղեկավար օրգանների ընտրությանը։ Նոր պրեզիդենտ ընտրվեց Բեռլինի Համալսարանի պրոֆեսոր Ա. Ֆիմը։

Նիստերը ավարտելուց հետո, տեղի ունեցան հետաքրքիր թեմատիկ էքսկուրսիաներ լավագույն մասնագետների ղեկավարությամբ։ Ես մասնակցեցի Բեռլինի կենտրոնին նվիրված Շարլեռ գետով նավային և մայրաքաղաքի հարավ-արևելյան հանգստի գոտային նվիրված էքսկուրսիաներին։

Ինձ հնարավորություն տրվեց կոնգրեսի ֆիզիկո-աշխարհագրական սեկցիայում զեկուցում կարդալու «Լեռնային լանդշաֆտները որպես կուրորտային գործոն» թեմայով, ինչպես նաև Հայաստանի աշխարհագրության պրոբլեմներին նվիրված դասախոսություններ՝ Բեռլինի Ս. Հումբոլտի անվան և Լայպցիգի Կ. Մարքսի անվան համալսարանների աշխարհագրության սեկցիաներում։

Մայիսյան տոներից հետո ինձ հնարավորություն ընձեռնվեց մասնագիտական մարշրուտներ կատարելու դեպի Լայպցիգ և նրա շրջակայքը, Դրեզդեն և Սաքսոնական Շվեյցարիայի տեսարժան վայրերը, ինչպես նաև Պոտսդամ։ Էքսկուրսիաները նվիրված էին հանրապետության լանդշաֆտների ուսումնասիրության, հանգստի աշխարհագրության, բնական ռեսուրսների օգտագործման և վերականգնման պրոբլեմներին, որոնք շատ կարևոր են նաև մեր հանրապետության համար։

Լայպցիգում գտնվածս ժամանակամիջոցին հնարավորություն ստացա ծանոթանալու գիտությունների ակադեմիայի աշխարհագրության ինստիտուտի ատլասների հարուստ հավաքածուին և քարտեզագրական լաբորատորիայում կատարվող աշխատանքներին։

ՀՍՍՀ ԳԱ Երկրաբանական ինստիտուտ

Ստացվել է 15.XI.1969